

ԱՆՏՈՆ ՄԱՏԱԹԻԱ ԳԱՐԱԳԱՇԵԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԵՐԸ ԵՒ ԳԻՏԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

ՃԱՆ ԷՐԶՈՒՐՈՒՄԼՈՒԹՂՈՒ
canerzurumluoglu@hotmail.com

ԺԹ. դարու երկրորդ կեսին Եւրոպայի մէջ տարածուող դրապաշտական եւ նիւթապաշտական փիլիսոփայութիւնը սկսաւ արձագանգուիլ օսմանցի որոշ հայ մտատրականներու կողմէ: Եղիա Տէմիրճիպաշեան ու Գալուստ Կոստանդեան դարձան դրապաշտութեան հաւատարիմ պաշտպաններ: Բացի այս անուններէն, Գրիգոր Մսէրեանը - որպէս հրատարակիչ - իր նպաստը բերաւ դրապաշտ փիլիսոփայութեան հանրայնացման՝ իր հրատարակած *Մէտֆորա* հանդէսով: Հայ դրապաշտները, հետեւելով Արեւմուտքի օրինակներուն, կը մտածէին, որ գիտական մտքի հանրայնացումը պիտի նպաստէ հասարակութեան զարգացման եւ ժամանակավրէպ դարձած հաստատութիւններու բարեփոխման ու այժմէականացման: Այս ուղղութեամբ, անոնք ջանացին արեւմտահայ ընկերութեան փոխանցել արեւմտեան մտքի դրապաշտ եւ նիւթապաշտ գաղափարները: Այս շրջանին, թէեւ ոչ դրապաշտ, Անտոն Մատաթիա Գարագաշեան հանդէս եկաւ իբրեւ գիտական մտքի պաշտպան եւ նիւթապաշտ փիլիսոփայութեան համակիր: Ան իր դասագիրքերուն միջոցաւ ծանօթացուց արեւմտեան փիլիսոփայութիւնը, յատկապէս ընդգծելով փորձառական դպրոցի կարեւորութիւնը:

Գարագաշեան ծնած է 1818ին Պոլիս¹: Ուսումը ստացած է նախ Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Ղալաթիոյ վարժարանին մէջ², ապա 1832ին ղրկուած Վիեննա եւ 1840ին ձեռնադրուած է վարդապետ՝ վերանուանուելով Մատաթիա: 1840-48՝ Գարագաշեան կը պաշտօնավարէ իբրեւ վանքի մատակարար եւ դպրանոցին մէջ կը դասաւանդէ հայերէն եւ ճարտասանութիւն: Իր գրական երախայրիքը կ'ըլլայ իր վանակիցներու³

¹ Ա. Մուպահեան, «Հ. Մատաթիա Գարագաշեան, կեանքը եւ գործերը», *Մուրճ*, Յունուար 1904, էջ 57 (արտատպուած *Սուրհանդակ*էն «աննշան յապատումներով»): Խաչկունց 1820ը կու տայ (Ա. Մ. Գարագաշեան, «Կենսագրական-մատենախօսական»): *Քիւրակն*, 3 Սեպտեմբեր 1898, Կ. Պոլիս, էջ 532:

² Արշակ Ալպոյաճեան, «Անհետացող դէմքեր, Ա. Մ. Գարագաշեան», *Քիւզանդիոն*, 22 Նոյեմբեր 1903, Կ. Պոլիս:

³ *Մուրճի* մէջ կը նշուին Գաթըրճեանի եւ Յովնանեանի անունները որպէս թարգմանիչ Գարագաշեանի հետ, իսկ գիրքին վրայ որպէս թարգմանիչներ գրուած է «Յաշակերտաց Մխիթարայ Մեծի Աբբայի»: Ալպոյաճեանի պատրաստած ցուցակին մէջ Գարագաշեանի կողքին միայն կը նշուի Գաթըրճեանի անունը:

հետ թարգմանած Պոսիւէի⁴ *Խօսք վասն տիեզերական պատմութեանը* (*Discours sur l'histoire universelle*), որ տպուած է 1841ին Վիեննա: 1843ին միաբանութեան որոշումով կը դրկուի Վիեննայի համալսարանը՝ բնական պատմութեան դասերու հետեւելու համար⁵: 1848ին կը ստանձնէ Զմիռնիոյ Մխիթարեաններու դպրոցին վարիչի պաշտօնը⁶, տարի մը ետք Պոլիս կ'երթայ եւ չի վերադառնար: Հայրը արդէն մեռած էր, կարճ ժամանակ ետք մայրը եւս կը կորսնցնէ եւ բազմանդամ ընտանիքի ապրուստը հոգալու համար կը մնայ Պոլիս՝ Բերայի Վիեննական Մխիթարեաններու վանատունը⁷: 1856ին սքեմաթող կ'ըլլայ՝ նիւթապաշտ գաղափարներու ազդեցութեամբ⁸: Նոյն տարին կը սկսի աշխատակցիլ Bible Houseին, ուր կը բոլորէ 40 տարիներ: Իր աշխատութեան մաս կը կազմեն *Աւերաբեր* թերթի խմբագրութիւնը եւ բարոյական, քաղաքական ու գիտական նիւթերու նովիրում թարգմանութիւններ: Կարելոր դեր կը խաղայ *Աստուածաշունչ*ի աշխարհաբար սրբագրում հրատարակութեան գործին մէջ: Կը դասաւանդէ Խասգիւղի Ներսիսեան վարժարանին մէջ, ուր իր աշակերտներուն մէջ կը գտնուէր նաեւ յետագայ նշանաւոր գրող եւ դրապաշտ մտաւորական Տէմիրճիպաշեան: 1861ին կը ստանձնէ *Սէր* հանդէսին խմբագրութիւնը, ուր կը գրէ լեզուական նիւթերու շուրջ յօդուածներ: Բացի *Սէր*էն, *Չեփիւոճ* եւ *Մասիսի* մէջ ալ լոյս տեսած են իր գրչին պատկանող լեզուական ու կրթական նիւթերու մասին յօդուածներ⁹: 1881ին նշանաւոր դարձած գրապայքարի մը ընթացքին *Թերճէմանը Էֆքեարի* մէջ պաշտպանած է գրաբարը՝ *Մասիսի* մէջ գրող Բիւզանդ Քէչեանի դէմ¹⁰: 1860ականներուն կ'ըլլայ Պոլսոյ Արեւելեան թատրոնի ղեկավարներէն¹¹: Գարագաշեան հեղինակած է նաեւ բազմաթիւ դասագիրքեր՝ փիլիսոփայութեան, հայերէնի, քերականութեան, պատմութեան, տրամաբանութեան, աշխարհագրութեան, տիեզերագիտութեան եւլն., որոնք մեծ ընդունելութիւն գտած են¹²:

⁴ Jacques-Bénigne Bossuet (1627-1704).- ֆրանսացի հոգեւորական եւ գրող:

⁵ Խաչկոնց, «Ա. Մ. Գարագաշեան, Կենսագրական», էջ 533

⁶ Ալպոյաճեան, «Անհետացող»:

⁷ Մուպահեաճեան, «Հ. Մատաթիա Գարագաշեան», էջ 59:

⁸ Նոյն, էջ 59:

⁹ Նոյն, էջ 61-62:

¹⁰ Նոյն, էջ 65:

¹¹ Հր. Գ., Շաքարեան, Ա. Մ. Գարագաշեանի աշխարհայացքը, ԵՊՀ հրատ., Երեւան, 1962, էջ 203:

¹² «1859-1896 դպրոցական դասագիրքերու մեծագոյն մասը Գարագաշեանին էր գոր կը հրապարակէր, սնտուկ սնտուկ կը ծաւալէր Գաւաթեան գրապոնը» (Ա. Մ. Գարագաշեան, «Կենսագրական-մատենախօսական», *Քիւրակն* 21 Մարտ 1900, էջ 164: «Գարագաշեանի գրաբար քերականութիւններն եւ այլ դասագրքերն յաջորդաբար քանի մը տպագրութիւններ ունեցած են, ամէն մէկը 5-6-10.000 օրինակներ» (Բիւզանդ Քէչեան, «Մատաթիա Գարագաշ, յաւելումական

Իր գործերուն մէջ ուշագրաւ է *Քննական պատմութիւն հայոց*ը. փորձ՝ գիտական մեթոտով նոր պատմագրութեան մը: Ան հանդէս կու գայ քննադատական նոր մերձեցումով՝ անցեալի դասական պատմագիրներուն դէմ¹³, քննադատելով անոնց ազգային սնապարծութիւնը¹⁴: Զօպանեանի կարծիքով՝ «*իր ամենէն կարարեալ արտադրութիւնը*» *Նկարագիր ուսմանցն* է¹⁵, որ գիտութեան եւ դպրութեան պատմութեան մասին է, գրուած այն ժամանակ, երբ հեղինակը Մխիթարեան միաբան էր: Զօպանեան որպէս «*երկրորդական արտադրութիւն*» մեր ուշադրութեան կը յանձնէ նաեւ այլ աշխատութիւններ. Պօսիւէի *Խօսք վասն տիեզերական պատմութեան*ին ոսկեդարեան գրաբարով թարգմանութիւնը Գաթըրճեանի¹⁶ հետ, Ռասիւնի *Յաղագս կրօնիցին* տաղաչափեալ թարգմանութիւնը, *Արուեստ ճարտասանութեանը*՝ գրուած ոսկեդարեան գրաբարով եւրոպացի հեղինակներու նմանողութեամբ, Լաֆոնթէնի առակներու գրաբար թարգմանութիւնը, բանասիրական յօդուածները եւ *Ճաշակ ոսկեղէն դպրութեան* ոսկեդարեան գրաբարով գրուած թերթը¹⁷: Գարագաշեան գիտէր գերմաներէն, անգլերէն, լատիներէն, յունարէն, ֆրանսերէն: 1878-80 հայերէն կը դասաւանդէ Կայսերական լիսէին մէջ¹⁸, իսկ 1886-96¹⁹ գրաբար՝ Ազգային կեդրոնական վարժարանի: 1886ի սկիզբէն մինչեւ 1888ի Յուլիս Յ. Գուրգէնի հետ կը հրատարակէ *Ճաշակ ոսկեղէն դպրութեան* ամսաթերթը, ուր կը ջանայ վերականգնել գրաբարը: 1896ին²⁰ կը թողու թէ՛ Bible Houseի պաշտօնը, թէ՛ ուսուցչութիւնը: Իր կեանքի վերջին տարին իմացականութիւնը կը կորսնցնէ եւ 1903ին իր մահկանացուն կը կնքէ խոր ծերութեան մէջ: Նկատի առնելով, որ իր վերջին օրերուն «*Սկեպտիկ կեանքին համար զոչում յայտնած էր*», Պօղոս Էմմանուէլեան հայ կաթողիկէ պատրիարքին

տեղեկութիւններ, յուղարկաւորութիւնը», *Քիզանդիոն*, 21 Նոյեմբեր 1903): Քէշեան կը նշէ նաեւ, որ այս դասագիրքերը այլեւս ժամանակավրէպ դարձած են:

¹³ Ա.Մ. Թեոսեան, *Ա.Մ. Գարագաշեանի փիլիսոփայական եւ տրամաբանական հայեացքները*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1962, էջ 35-36:

¹⁴ «Յառաջաբան», *Քննական պատմութիւն հայոց*, մասն Ա., տպ. Յովսէփ Գաւաֆեան, Կ.Պոլիս, 1880:

¹⁵ Արշակ Զօպանեան, *Դէմքեր*, տպ. Մասիս, Փարիզ, 1929, էջ 82:

¹⁶ Տէն՝ ծնթ. 3:

¹⁷ Նոյն, էջ 82:

¹⁸ Mekteb-i Sultani (Galatasaray Lisesi):

¹⁹ Մուպահեաճեան, «Հ. Մատաթիա Գարագաշեան, կեանքը եւ գործերը», էջ 64: Խաչկունցի եւ Ալպոյաճեանի համաձայն 1886-92ի միջեւ է, իսկ Քէշեան *Քիզանդիոնի* 20 Նոյեմբերի թիւին մէջ (Մատաթիա Գարագաշեան) «երկար ատեն» կը գրէ:

²⁰ Դ. Խաչկունց, «Ա. Մ. Գարագաշեան, կենսագրական-մատենախօսական», *Քիւրակն* 21 Մարտ 1900: Խաչկունց 1893 թուականը կու տայ:

որոշումով կը թաղուի քահանայից յատուկ յուղարկաւորութեամբ²¹: Գաբրիէլ վարդապետ Մենեւիշեան իր դամբանականին մէջ, ակնարկելով այս գղջումին պիտի գոռար «անոնց դէմ որք հրաշքի չեն հաւատար»²²:

Գարագաշեանի կենսագիրները կ'ընդգծեն անոր փիլիսոփայական նիւթապաշտութիւնը, յատկապէս համակրանքը գերմանացի նիւթապաշտ Պիլսնէրի հանդէպ: Մուպահեաճեանի կարծիքով ան «յանկարծ նիւթապաշտ փիլիսոփայութեան յարեցաւ»²³: Մուպահեաճեան կը նշէ նաեւ, որ ան իր յառաջացած տարիքին «անյագօրէն կը կարդար» Պիլսնէրը²⁴ եւ զայն կը դաւանէր «մեծ մարդ»²⁵: Խաչկունցի կարծիքով, ան «Atheïste-moraliste» մըն է եւ իր փիլիսոփայութիւնը հիմնուած է Պիլսնէրի *Force et Matière*²⁶ գիրքի վրայ: Նիւթապաշտ ըլլալով հանդերձ, կղերականութեան դէմ չէր²⁷: Ս. Անգեղեայ (Արշակ Ալպոյաճեան) Մասիսի մէջ կը գրէ հետեւեալը. «Պիլսնէրական մըն էր, բայց օր մը հրապարակաւ ո'չ այդ դպրոցը պաշտպանեց եւ ո'չ ալ զայն բացատրեց հանրութեան: Ինքը իրեն համար շինած էր այդ համոզումը»²⁸:

Պիլսնէր (1824-99), որպէս անաստուած եւ նիւթապաշտ մտաւորական, Տարուինի *Տեսակներու ծագումը* գիրքէն չորս տարի առաջ՝ 1855ին, կը հրատարակէ գիտական նիւթապաշտութիւնը փառաբանող *Kraft und Stoff* (Ուժ եւ նիւթ) գիրքը, որուն մէջ կը պնդէ, թէ տեսակները փոփոխութեան ենթակայ են: Այս գիրքը կը թարգմանուի բազմաթիւ լեզուներու՝ հասնելով լայն զանգուածներու: Ան մեծ ազդեցութիւն կ'ունենայ նաեւ օսմանցի արեւմտամէտ մտաւորականներու վրայ: Այս աշխատանքով ան կանխեց Տարուինը: Ըստ այս աշխատանքին նիւթը անսահման է. այն չի կրնար ստեղծուիլ ոչինչէն: Բազմաթիւ կենդանի տեսակներ յառաջացած են շարժումի արդիւնքով: Տիեզերքը հիմնուած է նիւթի եւ ուժի վրայ: Բոլոր իրադարձութիւնները, որոնք եղած են, կան եւ պիտի ըլլան տիեզերքի մէջ՝ ենթակայ են նիւթի եւ ուժի օրէնքներուն: Մարդկային կեանքն ալ բացառութիւն չի կազմեր: Բնութիւնը ո'չ լաւ է, ո'չ ալ վատ: Ան անտարբեր է ար-

²¹ Բիւզանդ Քէշեան, «Մատաթիա Գարագաշեան», *Քիզանդիոն*, 20 Նոյեմբեր 1903:

²² Քէշեան, «Մատաթիա Գարագաշ, յաւելուածական տեղեկութիւններ»:

²³ Ա. Մուպահեաճեան, «Հ. Մատաթիա Գարագաշեան», էջ 59:

²⁴ Նոյն էջ 59:

²⁵ Նոյն էջ 65:

²⁶ *Kraft und Stoff* (Ուժ եւ նիւթ), Պիլսնէրի նիւթապաշտութիւն քարոզող նշանաւոր գիրքը:

²⁷ Ա. Մ. Գարագաշեան, «Կենսագրական-մատենախօսական», էջ 163: Քէշեանն ալ կը հաստատէ ասիկա. «անկրօն մը չէր բառին անձուկ իմաստովը» («Մատաթիա Գարագաշ, յաւելուածական տեղեկութիւններ»):

²⁸ Ս. Անգեղեայ, «Երկու Միսիթարեանները, Քաջունի եւ Գարագաշեան», *Արեւելք* 1903, թիւ 5432. արտատպուած Մասիսէն:

ժեքային դատողություններու նկատմամբ: Տիեզերքի մէջ վախճանաբանութիւն չկայ: Չկայ նաեւ Աստուծոյ կողմէն մարդուն տրուած խիղճ, որ անոր հնարատրութիւն տայ զատորոշելու բարին չարէն: Բարոյականութիւնը կը ստացուի կրթութեամբ եւ փորձառութեամբ:

Պիլիսնէր կը մտածէր, որ տարրփնականութիւնը յեղափոխեց ոչ միայն կենսաբանութիւնը, այլեւ մարդկային գիտելիքի բոլոր բնագաւառները: Պիլիսնէրի կարծիքով, այն միտքը՝ թէ մարդը արարչագործութեան ամենագեղեցիկ արդիւնքն է, մանկական պատրանք է: Մարդը պարզապէս կենդանական աշխարհի բնական արդիւնք է: Մարդու հոգին անոր ուղեղին ֆիզիքական գործունէութիւնն է, իսկ բարոյականութիւնը՝ կենդանական բնագոյներու զարգացումը²⁹: Պիլիսնէր 1848ի գերման յեղափոխական շարժումին մասնակցած էր³⁰: Ան կը մտածէր, որ մարդու պայքարը, ի տարբերութիւն բնութեան, անգիտակից չէ, եւ ըստ կարիքներու կարելի է փոփոխութիւններ կատարել³¹:

Գարագաշեան, Խաչկոնցին դրկած նամակի մը մէջ կը բացատրէ, թէ ինչու թողած է կղերականութիւնը³²: Նամակը կը սկսի հետեւեալ տողերով, ուր յստակօրէն կ'երեւի այդ շրջանի իր փիլիսոփայական աշխարհայեացքը. «*Իմ այժմու փիլիսոփայական դրութիւնս է նիւթականութիւն (materialisme)*»³³: Գարագաշեան կը պատմէ, թէ ինչպէս ծանօթացած է

²⁹ Atilla Doğan, "Sosyal Darwinizm ve Osmanlı Aydınları Üzerindeki Etkileri (1860-1914)" (Ընկերային տարրփնականութիւնը եւ ազդեցութիւնը օսմանեան մտաւորականներու վրայ), դոկտորական ատենախօսութիւն, Մարմարա համալսարան, 2003, էջ 112-17, 242-54:

³⁰ Harun Çakan, "19. Yüzyılda Alman Doğa Bilimi ve Felsefesinin Osmanlı Düşüncesindeki Yansımaları" (Գերմանական բնական գիտութեանց եւ փիլիսոփայութեան արտացոլումները օսմանեան մտքին վրայ՝ ԺԹ. դարուն) դոկտորական ատենախօսութիւն, Անքարա համալսարան, 2018, էջ 77:

³¹ Doğan, էջ 112-17, 242-54:

³² Նամակը ձեռք բերինք Եղիշէ Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի արխիւներէն (Ազատեան ֆոնտ, բաժին 7, համար 33, *Կրօնք եւ բարոյական*, ձեռագիր, 12 էջ): Ձեռագիրի առաջին չորս էջը կրճատումներով տպուած է *Բիւրակն* թերթին մէջ (թիւ 29, 1898, էջ 534-35): Խաչկոնց *Բիւրակն*ի վերոյիշեալ թիւին մէջ կը գրէ հետեւեալը. «*1856ին, միտքը կը պղտորի, կղերականութիւնը վրայէն կը թօթուէ՝ իր համոզման համաձայն չգոյնելով զայն: Ասոր շարժառիթը զոր մեր խնդրանքով գրած է, բառ առ բառ յառաջ կը բերենք*»: Գարագաշեանի այս նամակը հրատարակուած է Գէորգ Խրլոբեանի կողմէ՝ «Անտոն Գարագաշեանի «Կրօնք եւ բարոյական» անտիպ յօդուածը» խորագրով *Պալմաբանասիրական հանդէս*ի 2:1960ին մէջ: Գարագաշեանի նամակէն յայտնի կը դառնայ, որ Խաչկոնց Գարագաշեանի կարծիքը խնդրած է չորս նիւթերու մասին՝ նիւթականութիւն, հայերէն, *Քննական Պալմոսութեան* գրուելու պատճառները եւ բարոյական:

³³ Այս մասը Խաչկոնց չէ հրատարակած:

Պիլսների աշխատություններուն՝ գերմանացի բարեկամի մը առաջարկով: Պիլսների անունը անհանգստություն կը պատճառէ արքաօր³⁴: Վերջինս Գարագաշեանը կը խրատէ հեռու մնալ նման անաստուած հեղինակներէ: Գարագաշեան անիրաւ կը գտնէ արքաօր քննադատությունները, մերժելով այն կարծիքը, թէ նիւթականութիւնը անբարոյականութեան կը տանի, եւ կրօնքի հասցէին կ'ուղղէ խիստ քննադատություններ. «*կ'ըսենք ... թէ երկիւղ երեւակայել էակէ մը որ իբր թէ անողոք խստութեամբ կը հսկէ մեր վրայ, եւ իւր կամքն աւանդելով յանձնած է գրով մեծաւ մասամբ, տգէտ ժողովի մը՝ պատուիրելով մեզ հնազանդիլ նմա, եւ սպառնալով մատնել զմեզ, եթէ չհնազանդինք յաւիտենական անշէջ հրոյ, ոչ միայն է սուր եւ անտեղի, այլեւ մեծաւ մասամբ վնասակար եւ արգել մեր մտաւոր եւ բարոյական յառաջադիմութեան, որ էական պայմանն է մեր գոյութեան*»³⁵:

Երիտասարդ տարիներուն իտէապաշտ գաղափարներ պաշտպանող Գարագաշեան սքեմաթոլ ըլլալէ ետք, 1860ականներէն սկսեալ յատկապէս, կը մօտենայ նիւթապաշտ փիլիսոփայութեան: Այս շրջանին գրած յօդուածներուն եւ դասագիրքերուն մէջ ակներեւ է քննական եւ գիտական մտքի պաշտպանութիւնը: Կրօնական մտածելակերպի հասցէին երբեմն կ'ուղղէ լուրջ քննադատություններ:

Գարագաշեան այս շրջանին կը գրէ փիլիսոփայութեան եւ տրամաբանութեան նուիրուած երեք գիրքեր. *Սկզբունք տրամաբանութեան* (1864), *Համառօտ պատմութիւն փիլիսոփայութեան* (1868) եւ *Համառօտ փիլիսոփայութիւն կամ սկզբունք հոգեբանութեան, տրամաբանութեան, բարոյականի եւ բնական աստուածաբանութեան* (1868):

*Համառօտ պատմութիւն փիլիսոփայութեան*ը 80 էջէ բաղկացած, 151 հարցում-պատասխան բովանդակող փոքրիկ գրքոյկ մըն է, ԺԹ. դարու հայ իրականութեան մէջ փիլիսոփայութեան պատմութեան համակարգում ծանօթութիւն տուող առաջին դասագիրքը³⁶: Սկսելով նախասորատիկներէն կը հասնի մինչեւ ԺԹ. դարու առաջին կէսը: Գարագաշեան տեղեկութիւններ կու տայ փիլիսոփայութեան պատմութեան շրջաններու եւ հոսանքներու մասին: Հակիրճ կը ներկայացնէ փիլիսոփաներու կարծիքները, կը խուսափի մանրամասնութիւններէ: Արդիական փիլիսոփայութեան համեմատաբար աւելի քիչ տեղ յատկացում է, թէեւ եթէ նկատի առնենք իր ժամանակի օսմանեան փիլիսոփայութեան փոքրաթիւ թրքերէն գիրքերու սահմանափակ բովանդակութիւնը, այս աշխատութիւնը յա-

³⁴ Գարագաշեան թուականները շփոթած կրնայ ըլլալ, քանի որ Պիլսների անունը դեռ հասարակութեան ծանօթ չէր երբ ինք դեռ ուսանող էր: Մանրամասնութիւններու համար տե՛ս՝ վերը նշուած «Անտոն Գարագաշեանի «Կրօնք եւ բարոյական» անտիպ յօդուածը»:

³⁵ Ազատեան արխիւ, բաժին 7, համար 33, *Կրօնք եւ բարոյական*, ձեռագիր:

³⁶ Թեոսեան, էջ 20:

ռաջդիմություն մը կրնանք համարել³⁷: Գարագաշեան չի թաքցնէր իր համակրանքը Ֆրենսիս Պէյքընի եւ Տեքարթի հանդէպ: Գիրքին մէջ ուղղակի որեւէ դպրոցի չի յարիր, բայց կ'ընդգծէ գիտական մտքի կարեւորութիւնը:

Գարագաշեան, ի տարբերութիւն իր առաջին աշխատութիւններուն, որոնք գրուած են գրաբարով, այս գիրքերը կը գրէ աշխարհաբարով: Գիրքը ուշագրաւ է այն առումով, որ փիլիսոփայական եզրերու համար գործածուած են համապատասխան արեւմտահայերէն բառեր, երբեմն ֆրանսերէն եւ դասական յունարէնին հետ:

Գիրքի յառաջաբանին մէջ Գարագաշեան կը նշէ, որ փիլիսոփայութիւնը այնպիսի գիտութիւն մըն է, որ «*ուսումն իր պատմութեամբը կը լուսաւորուի*»: Փիլիսոփայութեան պատմութիւնը կարեւոր է, որովհետեւ «*անոր ուսմանը մէջ կը տեսնենք այն տեղը՝ ուր հասած է մարդկային մտքին ամենէն մեծ գործունէութեան, այն է՝ ազաւոր խորհելու սկզբան, շարժումը*»: Գարագաշեանի կարծիքով մենք հասած ենք մեթոտի մը, որ ցոյց կու տայ թէ ինչ ճամփայ պէտք է նախընտրել ճշմարտութեան հասնելու համար: Պէյքընի մեթոտը այս առումով «*ոչ թէ առանձին երեւոյթ մըն է*», այլ «*փիլիսոփայական դրութեանց շղթային մէկ օղակը*»: Գարագաշեան գիրքը կը նուիրէ «*ազաւոր մտածութեան բարեկամ հայ երիտասարդութեան*»³⁸:

Գարագաշեան փիլիսոփայութիւնը կը բաժնէ 5 դպրոցներու. զգացականութիւն (sensualisme), ոգեկանութիւն (spiritualisme), սկեպտականութիւն (skeptisme), խորհրդականութիւն (mysticisme), ընտրականութիւն (électisme): Այս դպրոցներու մասին տեղեկութիւններ կը փոխանցէ եւ փիլիսոփայութեան պատմութիւնը կը բաժնէ դարաշրջաններու.-

Նախնի փիլիսոփայութիւն՝ Թաղեսէն եւ Պիթագորասէն մինչեւ Սոկրատ (640-470):

Միջին փիլիսոփայութիւն՝ Սոկրատէն մինչեւ Պղոտինոս կամ Աղեքսանդրեան փիլիսոփայութիւնը (470-200 Ք.ե.):

Խառն փիլիսոփայութիւն՝ Աղեքսանդրեան փիլիսոփայութենէն մինչեւ Պէյքըն եւ Տեքարթ (200-1600):

Արդի փիլիսոփայութիւն՝ Պէյքընէն եւ Տեքարթէն մինչեւ իր ժամանակը (1600-1868):

Այս շրջաններու էական յատկութիւններուն մասին Գարագաշեան հակիրճ տեղեկութիւններ կը փոխանցէ, եւ առարկայի, սկզբունքի ու մեթոտի

³⁷ Յունարէն եւ այլ լեզուներով գրուած գիրքերը ուսումնասիրելու հնարաւորութիւնը չունեցանք: Յետթանգիմաթեան շրջանի օսմանեան թուրք փիլիսոփայութեան հակիրճ ներկայացման համար տե՛ս մեր յօդուածը՝ «Եղիա Տէմիրճիպաշեանի դրական փիլիսոփայութեան արժեւորումը օսմանեան փիլիսոփայութեան պատմութեան մէջ (1840ականներէն սկսեալ)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, 40:2020, էջ 656-57:

³⁸ Անտոն Գարագաշեան, «Յառաջաբան», *Համառօտ պատմութիւն փիլիսոփայութեան*, տպ. Քիւրքճեան, Կ. Պոլիս, 1868:

տեսանկյունէն կ'ուսումնասիրէ զանոնք, միաժամանակ գլխաւոր դպրոցներու եւ նշանաւոր անուններու մասին բացատրութիւններ կու տայ: Անոր առաջին շրջանի փիլիսոփաները սխալ մեթոտ գործածեցին, բայց իրենց արծարծած բազմաթիւ փիլիսոփայական խնդիրները արդի փիլիսոփաներու առարկան դարձան: Այս ծիրէն ներս կը դիմէ Պէյքընին, որուն կարծիքով այս շրջանի փիլիսոփաները «*երեւելի հանճարներ էին*»³⁹: Այլ առիթով մը, դարձեալ կը յիշէ Պէյքընի անունը, երբ կը խօսի Ռաճըր Պէյքընի մասին. «*ասով ճամփայ բացած եղաւ իր անուանակցին՝ Պէյքընի, կարարեալ փորձառական դրութեանը*»:⁴⁰ Գարագաշեանի աշխարհայեացքին թափանցելու համար մեզի աւելի շատ նիւթ կը մատակարարեն արդի շրջանի մասին անոր գրութիւնները: Ան մօտաւորապէս 7 էջ կը տրամադրէ Ֆ. Պէյքընին եւ անոր դպրոցին, նշելով, որ փիլիսոփայութիւնը «*մարդկային մտքին ազատ քննութիւնն է*»: Պէյքըն Անգլիոյ մէջ, իսկ Տեքարթ՝ Ֆրանսայի մէջ «*փիլիսոփայութեան ճշմարիտ մեթոդը կամ ճամփան սորվեցնելով գիտութեանց վիճակը կերպարանափոխ ըրին*»: Պէյքըն ցոյց տուած է, թէ ինչպէս պէտք է քննել բնութիւնը, իսկ Տեքարթ՝ ինչպէս պէտք է խորհիլ: Ամէն պարագայի, երկուքն ալ կ'առաջարկեն փորձառական մեթոտը⁴¹:

Գարագաշեան Պէյքընի մեթոտը կը համառօտէ երեք յատկանիշով՝ դիտարկում, փորձ եւ մակաճութիւն: Ըստ Գարագաշեանի, Պէյքընի մեթոտը նպաստեց գիտութեան յառաջդիմութեան. «*բնութիւնն ուսանելու մէջ մարդկային մտքին ըրած յառաջադիմութեան առաջին պարփու Պագոնի կը վերաբերի*»: Այս մեթոտին առաւելութիւնը այն է, որ ի տարբերութիւն ենթակայական բնոյթ ունեցող նախկիններէն, առարկայական հիմք ունի, այսինքն բնութեան քննութեան վրայ հիմնուած է⁴²: 125րդ հարցումին՝ թէ ինչ արդիւնք ունի Պէյքըն, Գարագաշեան կը պատասխանէ հետեւեալ ձեւով.

«Իմ նպատակս», կ'ըսէ Պագոն, «տաճարին (գիտութեանց) այս կամ այն մասը լուսաւորել չէ. ես կ'ուզեմ վառել մեծ ջահ մը որ բոլոր շինուածոյն լոյս տայ»: Ուստի յիրաւի նմանցումը է Պագոն 'ի կիցս ճանապարհաց դրուած արձանի մը, որ անշարժ կենալով՝ անցնողին կը ցուցնէ թէ ուստի պիտի երթայ⁴³:

Գարագաշեան Պէյքընէն ետք կ'անցնի Տեքարթին եւ հակիրճ կը բացատրէ անոր մեթոտական տարակուսանքը (*doute méthodique*): Գարագաշեանի համաձայն Տեքարթ ուրիշ բարեկարգութիւններու ճամփայ բա-

³⁹ Նոյն, էջ 23:

⁴⁰ Նոյն, էջ 55:

⁴¹ Նոյն, էջ 58:

⁴² Նոյն, էջ 60-61:

⁴³ Նոյն, էջ 60:

ցող իմացական բարեկարգութեան մը հեղինակը եղաւ: «Այնպէս մեծ եղաւ Տեքարթի ազդեցութիւնը բնագանցական եւ բարոյական աշխարհի մէջ, ինչպէս Պագոնիներ՝ բնական աշխարհի մէջ»՝ կը գրէ ան⁴⁴:

Պէյքընի դպրոցը փորձառապաշտութիւն է⁴⁵: Այս դպրոցին համաձայն մեր բոլոր գիտելիքներուն աղբիւրը արտաքին աշխարհն է, որ առարկայական բնոյթ ունի. «մեր բոլոր գաղափարներուն սկիզբը եւ սերմը զգացողութիւնն է»⁴⁶: Այս դպրոցը բարոյականի վրայ ալ լուրջ ազդեցութիւններ ունեցած է: Նախ կարելի չէ փաստել զգացողութիւններէ անկախ բարոյական գաղափարներու գոյութիւնը: Մարդիկ իրենց որոշումները կը կայացնեն յօգուտ իրենց համար հաճելի եղողին, եւ ասիկա յարատեւ պատերազմական վիճակի կը տանի: Փոխանակ բարոյական ընդհանուր օրէնքի մը, մենք մեր շահերը նկատի կ'առնենք եւ ապահով կարգ մը կ'ունենանք, քանի որ «*ուրիշին իրաւունքը բռնաբարելով՝ մերինը վրանգի մէջ դրած կ'ըլլանք*»: Գարագաշեան կը նշէ, որ Պէյքընի դպրոցի սկզբունքներուն շնորհիւ յառաջ եկաւ իրաւաբանութիւնը, որ արդի քաղաքականութեան երաշխիքն է⁴⁷:

Գարագաշեան բանադատական փիլիսոփայութեան հայր կը համարէ Քանթը եւ մօտաւորապէս 2,5 էջ կը տրամադրէ անոր: Իր այս հետաքրքրութիւնը թերեւս կրնանք բացատրել անով, որ ան Վիեննայի մէջ ստացած էր իր ուսումը եւ հետեւած գերմանական փիլիսոփայութեան: Գարագաշեանի համաձայն Քանթ «*իրօք փորձառական կամ զգացական (Պագոնեան) փիլիսոփայութեան նոր ուժ մը տրուաւ, եւ գաղափարականութեան մեծ հարուած մը*»⁴⁸: Պէյքըն, Տեքարթ եւ Քանթ Գարագաշեանի համաձայն «*արդի փիլիսոփայութեան պարագլուխները*» կը հանդիսանան, որոնց շնորհիւ գիտական հետազօտութիւնը վերացեալէն թանձրացեալ, տեսականէն գործնական դարձած է: Դրապաշտութիւնն ալ բազմաթիւ հետետրոյներ ունեցած է⁴⁹:

Համառօտ պատմութիւն փիլիսոփայութեան գիրքը կը թողու այն տպաւորութիւնը, որ Գարագաշեան միւս երկու դասագիրքերուն բաղդատմամբ այդտեղ իր միտքերը շարադրած է աւելի ազատօրէն: Երբեմն կը յայտնէ ենթակայական, ոչ-այնքան դասագրքային գաղափարներ, ինչ որ հնարաւորութիւն կու տայ քիչ թէ շատ թափանցելու իր աշխարհայեացքին մէջ:

⁴⁴ Նոյն, էջ 62-63:

⁴⁵ Նոյն, էջ 63:

⁴⁶ Նոյն, էջ 64:

⁴⁷ Նոյն, էջ 65-66: «Ճշմարիտ շահ ըսելով կ'իմացուի մարդու բանաւոր եւ իրական օգուտը: Ասիկա տարբեր է մարդու զգայական եւ սուտ օգուտէն որ կրնայ ճշմարիտ օգուտին յաղթել», Անտոն Գարագաշեան, «Յառաջաբան» Համառօտ փիլիսոփայութիւն կամ սկզբունք, էջ 81:

⁴⁸ Անտոն Գարագաշեան, Համառօտ պատմութիւն փիլիսոփայութեան, էջ 74:

⁴⁹ Նոյն, էջ 75:

Համառոտ փիլիսոփայություն կամ սկզբունք գիրքը տպուած է 1868ին, Համառոտ պատմութիւն փիլիսոփայութեան հետ նոյն տարին: Այս դասագիրքը 99 փոքրիկ էջերէ եւ 253 հարցում-պատասխանէ կը բաղկանայ: Գիրքին ետեւը կցուած է նաեւ փիլիսոփայական փոքրիկ բառացանկ մը՝ հայերէնէ ֆրանսերէն: Գարագաշեան յառաջաբանին մէջ կը նշէ, որ փիլիսոփայութիւնը «*յարուկ մտքով մը կը նշանակէ մարդկային հոգւոյն կամ մտքին գիտութիւնը*» եւ զայն կը բաժնէ 4 մասի. հոգեբանութիւն, տրամաբանութիւն, բարոյական եւ աստուածգիտութիւն կամ բնական աստուածաբանութիւն: Գարագաշեանի համաձայն յատկապէս հոգեբանութիւնը եւ տրամաբանութիւնը կարեւոր են դպրոցական ուսման համար, քանի որ ասոնց առարկան է «*մտքին կարողութիւններն ու գործողութիւնները ճանչնալ եւ անոնց ինչպէս եւ ուր ըստ պարզաճի գործածուիլը գիտնալը*»⁵⁰:

Առաջին՝ «*փիլիսոփայութիւնը յանձուկ միտքս ի՞նչ է*», հարցումին տրուած պատասխանին մէջ կը պարզէ իր տեսակէտը. «*մարդկային իմացականութեան գիտութիւնն է. իմացականութեան՝ որով կը խորհինք*»: Գարագաշեան «Հոգեբանութիւն եւ տրամաբանութիւն» խորագրեալ առաջին մասին մէջ կը բացատրէ, թէ ի՞նչ է գաղափարը, որո՞նք են անոր բաժանումները եւ տեսակները: Յետոյ կ'անցնի մտքի կարողութիւններուն: Կը բացատրէ զգայնութիւնը (sensibilité), իմացողութիւնը (intelligence) եւ գործունէութիւնը: Առաջին մասին երրորդ նիւթն է մտքին կարողութիւններուն գործածութիւնը: Գիրքի երկրորդ մասն է Բարոյականը, իսկ երրորդը՝ Բնական աստուածաբանութիւնը:

Մեր նիւթին առնչութեամբ, յատուկ արժէք կը ներկայացնեն մեթոտի մասին Գարագաշեանի գրածները: Ասոնք մեզի առիթ կ'ընծայեն, որ իմանանք, թէ այդ ժամանակի հայ ուսանողը ի՞նչ կը սորվէր գիտական մտքի մասին: Այս դասագիրքը որեւէ ձեւով կարելի չէ ներկայացնել իբրեւ գիտական մտքի պաշտպանութիւն. յամենայն դէպս, ան կը բովանդակէ բաժիններ, ուր կը դասաւանդուին գիտական փիլիսոփայութեան մաս կազմող դասանիւթեր⁵¹:

Գարագաշեանի համաձայն՝ մեթոտը «*ճշմարտութիւնը փնտրելու կամ ապացուցանելու մէջ մտքին բռնած ճամփան է*»⁵²: Մեթոտի ընդհանուր կանոններն են. իրողութեան իրական ըլլալը ստուգել, առանց դիտարկումի եւ փորձի ենթադրութիւն չընել, սահմանել՝ թէ առարկան պարզ է, եւ

⁵⁰ «Յառաջաբան», Համառոտ փիլիսոփայութիւն կամ սկզբունք:

⁵¹ Մեթոտի ուսումնասիրութիւնը ԺԹ. դարու հայ մտքի պատմութեան մէջ ուշագրաւ տեղ գրաւած է յատկապէս 1878ին Կոստանդեանի կողմէ հրատարակուող Մեթոտի վրայ գիրքով, ուր հեղինակը բուռն կերպով պաշտպանած է գիտական միտքը եւ դրապաշտութիւնը (տե՛ս՝ մեր յօդուածը՝ «Գալուստ Կոստանդեանի դրապաշտ աշխարհայեացքը եւ դերը օսմանեան փիլիսոփայութեան պատմութեան մէջ», Հայկազեան հայագիտական հանդէս, 42/1:2022, էջ 501-21:)

⁵² Համառոտ փիլիսոփայութիւն կամ սկզբունք հոգեբանութեան, էջ 48:

լուծել կամ վերլուծել՝ եթե առարկան պարզ չէ⁵³։ Գարագաշեան յետոյ կ'անցնի մեթոտի տեսակներուն՝ ապացուցական կամ ընծայական, որուն օրինակ կու տայ ուսողութիւնը, եւ փորձառական կամ ենթադրական, ինչպէս՝ ֆիզիքական եւ բնական գիտութիւնները⁵⁴։

Գարագաշեանի գիտութիւններու դասատրման մէջ բացի մաթեմատիքական եւ բնական գիտութիւններէ, կը գտնուին նաեւ բարոյական գիտութիւնները, որուն մեթոտը «*առաջին նշանակութեամբ*» փորձառական կամ մակաձական է։ Մեր հոգին ճանչնալու համար պէտք է դիմենք «*ներքին զգայութեան կամ գիտակցութեան*»⁵⁵։ Գարագաշեանի համաձայն՝ դիտարկումը հոս ալ կարելորդ էր կը խաղայ։

Գարագաշեանի կարծիքով «*մեր նպատակին նայելով*» երկու տեսակ մեթոտ եւս կայ. վերլուծական մեթոտ եւ բաղադրական մեթոտ։ Առաջինը ճշմարտութեան մը հասնելու համար է, իսկ երկրորդին նպատակն է՝ գիտութիւն սորվեցնել⁵⁶։

Գարագաշեանի *Սկզբունք տրամաբանութեանը* լոյս կը տեսնէ 1864ին։ Գիրքը կազմուած է 302 էջերէ, ունի նաեւ հայերէնէ անգլերէն բառացանկ մը։ Գիրքին մէջ տեղ տրամադրուած է եզրերու, նախադասութիւններու, ձեռնարկութեան, ստորոգելիներու եւ խաբէութեան տեսակներու եւն.։ Գիրքը գրուած է անգլիացի փիլիսոփայ Ուաթլիի (Whately)⁵⁷ *Elements of Logic* (1826) գրքին հետետողութեամբ։ Գիրքը ուղղակի թարգմանութիւն չէ, Գարագաշեան, ինչպէս ինքն ալ կը նշէ յառաջաբանին մէջ, ըրած է կարգ մը փոփոխութիւններ։ Գարագաշեանի համաձայն՝ «*տրամաբանութիւնը թէ՛ չափազանց գովողներ եւ թէ՛ չափազանց պարսաւողներ ունեցած է*»։ Առաջիններուն համար «*տրամաբանութիւնն ամէն բանի մէջ ճշմարտութիւնը երեւան հանելու մի միայն գործիքն է*», իսկ երկրորդ խումբի պատկանողներուն համար տրամաբանութիւնը խաւար ժամանակներու մէջ «*վայրապար մշակուեցաւ*», եւ երբ փիլիսոփայութիւնը զարգացաւ, «*տրամաբանական ուսումը նուազութեան եւ արհամարհութեան մէջ ինկաւ*»⁵⁸։ Գարագաշեանի համաձայն՝ այս երկու կարծիքներն ալ ճիշտ չեն։ Ուաթլի անոնցմէ գլխաւորն է, որ տրամաբանութիւնը այս երկու նախապաշարումներէն ազատելու կը ջանայ։ Ան «*Տիպէկտիկեանց եւ Դպրոցականաց աւելորդ իմաստակութիւններն եւ ան աղճատանաց լեզուն*» վերցուց։

Ուաթլի այնքան յաջողեցաւ, որ գիրքը Անգլիոյ մէջ մեծ ընդունելութիւն գտաւ⁵⁹։ Գարագաշեան մէջբերումներ կ'ընէ բնագիրի յառաջաբանէն, ուր

⁵³ Նոյն, էջ 48։

⁵⁴ Նոյն, էջ 49։

⁵⁵ Նոյն, էջ 64։

⁵⁶ Նոյն, էջ 50։

⁵⁷ Richard Whately (1787-1863).- անգլիացի հոգետորական եւ փիլիսոփայ։

⁵⁸ «Յառաջաբան», *Սկզբունք տրամաբանութեան*, էջ Ե։

⁵⁹ Նոյն, էջ 2։

հեղինակը կը քննադատէ Դպրոցականները. Ուաթլիի կարծիքով, անոնք տրամաբանութեան «*ճշմարիտ բնութիւնն ու նպատակը չգիտցան*», բնական գիտութիւններու ուսումնասիրութեան մէջ «*փոխանակ բնաբանական հետազօտութեան, իմաստասիրութեամբ վարուիլ օրինաւոր կարծեցին*»⁶⁰: Ուաթլի տեղ կը տրամադրէ Պէյքընի եւ Ճոն Լոքի գաղափարներուն: Գարագաշեան կը յայտնէ, որ այս գիրքին նպատակն է «*տրամաբանութեան էութիւնը կամ բնութիւնը ճանչցնել*»⁶¹:

Գարագաշեանի՝ մամլոյ մէջ հրատարակուած յօդուածները ընդհանրապէս լեզուական եւ բանասիրական բնոյթ ունին, բայց կան նաեւ մեզի հասանելի քիչ թիով յօդուածներ, որոնք առիթ կ'ընծայեն ըմբռնելու իր աշխարհայեացքը: Ասոնցմէ մէկն է, զինք բողոքականութեամբ մեղադրող Տերոյենցին իր տուած պատասխանը, ուր ան կը մերժէ նման պնդումները⁶²: Կրօնական դրութիւնները տղայական եւ չնչին գտնելով, ան կ'ընդգծէ խղճի եւ մտքի ազատութեան կարեւորութիւնը: Ասոնք մարդոց մէջ խաղաղութիւն եւ յառաջդիմութիւն բերելու միակ միջոցներն են: Իսկ այս ազատութեան զեղծման դէմ ամէնէն զօրաւոր միջոցն է լուսաւորութիւնը, «*զոր մտքի ազատ բնութենէ եւ փորձառութենէ յառաջ եկող դրական գիտութիւնք միայն կրնան տալ*»⁶³: Գարագաշեան կը յայտնէ ազգին մէջ լուսաւորութիւնը տարածելու իր ձգտումը: Գիտական մտքի հանդէպ ունեցած համարումը բացայայտ է:

«*Մենք ճշմարտութիւնը ոչ Լուրերի, ոչ Կալվինի, ոչ Պապին, ոչ ալ այս ինչ աստուածաբանի կամ փիլիսոփայի կամ որ եւ իցէ մարդու քով կը փնտրենք, այլ բնական եւ պատմական, միով բանիւ՝ փորձառական գիտութեանց մէջ*»⁶⁴:

Մեզի համար ուշագրաւ է նաեւ դրապաշտ մտաւորական Տէմիրճիպաշեանի խմբագրած *Երկրագունք*ին մէջ 1886ին հրատարակուած Գարագաշեանի «Բան (Raison) եւ դատում (Critique)» յօդուածը, ուր խստօրէն կը քննադատէ կրօնականները: Ակնարկելով գիտական ճշմարտութիւններուն դէմ Կաթողիկէ Եկեղեցիին անցեալին ցոյց տուած հակազդեցութիւններուն, ան կը գրէ հետեւեալը.

Այս ճշմարտութեանց դէմ որ արդէն մեծամեծ գիտերու հիմունք են՝ ի՞նչ սպառնալիք չեղան. խարոյկներ, խաչակրութիւններ, անաթեմաներ որ ցարդ կը տեղան մեր վրայ սիլապիւսներով⁶⁵:

⁶⁰ Նոյն, էջ ԺԱ:

⁶¹ Նոյն, էջ ԺԳ:

⁶² «Վերջին հարուած մ'ալ Տերոյենց պատուելիին», *Արեւելեան մամուլ* (արտատպուած *Մասիս*էն), Նոյեմբեր 1873, էջ 489-94:

⁶³ Նոյն:

⁶⁴ Նոյն, էջ 493:

⁶⁵ «Բան (Raison) եւ դատում (Critique)», *Երկրագունք*, 1886, էջ 298:

Բնածին գաղափարներու պաշտպաններն ալ Գարագաշեանի քննադատութիւններուն թիրախ կը դառնան. «*Բնածին գաղափարաց ջախջախիչ ցարդ չեղան կարող ցուցանել թէ ուր են եւ ուր դրուած այն բնածին գաղափարք*»⁶⁶: Բնածին գաղափարներու դէմ յարձակիլը հայ դրապաշտ փիլիսոփաներու մօտ ալ տարածուած երեւոյթ էր, քանի որ բնածին գաղափարներու գոյութիւնը կը համարէին փորձառական գիտութիւններու վրայ հիմնուած իրենց փիլիսոփայութեան համար սպառնալիք եւ յօգուտ կրօնական մտածելակերպի փաստ մը: Գարագաշեանի կարծիքով բանը (raison) «*ոչ այլ ինչ է եթէ ոչ հաւաքումն փորձառութեանց մարդոյ*»⁶⁷: Գարագաշեանի դրապաշտ ըլլալուն մասին փաստեր չկան, բայց իր միտքերուն մէջ նկատելի են դրապաշտ հակումները: Կը դիմէ Էրնսթ Ռընանի եւ Ճոն Ուիլիըմ Տրէյվիլըրի նման դրապաշտ անուններու: Յռաջողիմութիւնը փորձառութիւնով աստիճանաբար կը կատարուի: Այս բնութեան օրէնքը կը կոչուի յեղում (բնաշրջում): Գաղափարներու կարգն ալ երկրաբանական խաւերու պէս պիտի փոխուի: Նոր քաղաքակրթութիւններ պիտի ստեղծուին: Ռընանը վկայակոչելով, կը յայտնէ յոյսը ապագայի ուսեալ մարդկութեան, որ փիլիսոփայական յեղափոխութեան մը պիտի հասնի: Գարագաշեանի կարծիքով յեղափոխութիւններն իսկ խորքին մէջ բնաշրջումի արդիւնք են: Տիրող գաղափարներու կարգը հիմնատրուած է համերաշխութեան վրայ, որ մարդու բնական ազդումն է⁶⁸: Կ'ընդգծէ մեթոտի կարելորութիւնը. «*Ամէն ծանօթութիւն պարտի անցնել իւր մեթոտին բովէն, ապա թէ ոչ կը ներդի իբրեւ խորթ կամ անհարազատ*»⁶⁹: Քննադատական մերձեցումով կը վիճաբանի նաեւ հրաշքներու գոյութեան հարցին շուրջ:

Գարագաշեան վճռականօրէն կը հաստատէ ազատական ըլլալը. ան կը նշէ, որ ազատական սկզբունքները «*արդիւնք են մարդկային մտքին դարերով ըրած փորձառութեանը որ մեծամեծ զոհերու գինն է, եւ ստացուած են ամենէն մաքուր ու վեհանձն արեան մը որ մինչեւ ցայսօր կը թափուի*»⁷⁰:

1860ականներուն սկիզբը Սէր հանդէսին մէջ կը գրէ լեզուական նիւթերու շուրջ, կ'ընդգծէ գրաբարի նշանակալից դերը աշխարհաբարի համար եւ անոր ուսման անհրաժեշտութիւնը: 1886ին գրաբարով կը սկսի հրատարակել Յ. Գուրգէնի հետ *Ճաշակ ոսկեղէն դպրութեան* թերթը, որ ընդունելութիւն չի գտներ:

⁶⁶ Նոյն, էջ 298:

⁶⁷ Նոյն, էջ 298:

⁶⁸ Նոյն, էջ 298-300:

⁶⁹ Նոյն, էջ 301:

⁷⁰ Ա. Գարագաշեան, «Պատասխան մը», *Սէր*, 16 Յունիս 1862, էջ 203:

Գարագաշեան աշխատանք տարած է տարբեր բնագաւառներու մէջ, ինչպէս՝ փիլիսոփայութիւն, կրթութիւն, լեզուաբանութիւն, պատմութիւն եւն.: Մեծ համբաւ վայելած է որպէս հայագէտ: Գրած է բազմաթիւ դասագիրքեր, որոնք բազմիցս վերահրատարակուած են: Թէեւ մտատրական կեանքը սկսած է որպէս հոգեւորական եւ ստացած աստուածաբանական կրթութիւն, սակայն հեռացած է հոգեւորականութենէն եւ հակում ցոյց տուած նիւթապաշտութեան: Գրեթէ բոլոր կենսագիրները համաձայն են անոր պիլիսնէրականութեան մասին: Գերմաներէնի իմացութեան եւ Վիեննայի հետ ունեցած յարաբերութիւններուն շնորհիւ Գարագաշեան հաւանաբար ծանօթ էր ոչ միայն Պիլսնէրի, այլեւ 1848ի յեղափոխական սերունդի յայտնի գերմանացի այլ նիւթապաշտներու, եւ թերեւս այս միջավայրը ձեւատրեց անոր աշխարհայեացքը եւ պատճառ դարձաւ սքեմաթող ըլլալուն: Գարագաշեան ջանքեր ի գործ դրաւ արեւմտեան փիլիսոփայութիւնը եւ գիտական աշխարհայեացքը տարածելու հայոց մէջ: Ինչպէս պիտի ըսէր իր կենսագիրներէն մէկը՝ ան միտքերու վարդապետ եղաւ փոխանակ հոգիներու:

THE PHILOSOPHY TEXTBOOKS OF ANTON MADATYA KARAKASHIAN AND HIS SCIENTISM (PRO-SCIENCE APPROACH) (SUMMARY)

CAN ERZURUMLUOGLU
canerzurumluoglu@hotmail.com

During the second half of the 19th century, in line with Europe, some Western Armenian intellectuals started to become acquainted with positivist and materialistic ideas. One of these intellectuals was Anton Madatya Karakashian, who, under the influence of the German materialist philosopher Büchner, quit his clerical status and adopted a scientific worldview.

Karakashian propagated scientific views in some of his articles, but his main contribution was his Armenian textbooks on philosophy and logic. These books reflect his scientific worldview which stands closer to the empiricists. Furthermore, these books played an important role in introducing Western philosophy to Armenian students.

Karakashian was also a well-known Armenologist, educator, linguist and a popular textbook author. He promoted critical thinking, yet he was conservative in terms of language and campaigned for the revival of Krapar (classical Armenian), and even launched a journal in classical Armenian.